



ԵՊԻՍԿՈՊՈՍՍՑ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՈՒՄ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ա Ն Ի Ս Ս

1969 թվականի սեպտեմբերի 27-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, Վեհաբանի հանդիսությանց դահլիճում, **Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի** նախագահության ներքո, գումարվում է եպիսկոպոսական ժողովի Ա նիստը:

Եպիսկոպոսական ժողովին մասնակցում են.

1. Ս. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյան, պատրիարք հայոց Երուսաղեմի.
2. Ս. Շնորհք արքեպիսկոպոս Գալստյան, պատրիարք Թուրքիո հայոց.
3. Ս. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյան, լուսարարապետ Մայր Աթոռի.
4. Ս. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյան, կաթողիկոսական պատվիրակ Արևմտյան Եվրոպայի և առաջնորդ Ֆրանսիայի.
5. Ս. Հայրիկ արքեպիսկոպոս Ասլանյան, լուսարարապետ ու Երուսաղեմի.
6. Ս. Պսակ արքեպիսկոպոս Թումայան, կաթողիկոսական պատվիրակ Անգլիայի.
7. Ս. Բաբգեն արքեպիսկոպոս Ապատյան, կաթողիկոսական պատվիրակ և առաջնորդ Հարավային Ամերիկայի.
8. Ս. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյան, առաջնորդ ԱՄՆ-ի հայոց արեւելեյան թեմի.
9. Ս. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյան, առաջնորդ Իրաքի հայոց.
10. Ս. Բաբգեն եպիսկոպոս Վարժապետյան, հոգևոր հովիվ Վաշինգտոնի.
11. Ս. Կոմիտաս եպիսկոպոս Տեր-Ստեփանյան, առաջնորդ վրահայոց թեմի.
12. Ս. Գնել եպիսկոպոս Ճերեճյան, քարոզիչ Նոր Հաճնի ու Գեորգ եկեղեցու.
13. Ս. Պարզև եպիսկոպոս Գեորգյան, առաջնորդ Ռուսաստանի և Հյուսիսային Կովկասի.
14. Ս. Մաշտոց եպիսկոպոս Թաշիրյան, առաջնորդ Շիրակի թեմի.

15. Տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյան, առաջնորդ Ադրբեջանի թեմի.
16. Տ. Վահան եպիսկոպոս Տերյան, առաջնորդական փոխանորդ Արարատյան թեմի.
17. Տ. Տիրայր եպիսկոպոս Մարտիկյան, առաջնորդ Ռումինիայի և Բուլղարիայի թեմի.
18. Տ. Եղիշե եպիսկոպոս Սիմոնյան, առաջնորդ ԱՄՆ-ի արևմտյան (Կալիֆոռնիա) թեմի.
19. Տ. Հակոբ եպիսկոպոս Վարդանյան, կաթողիկոսական պատվիրակի փոխանորդ հարավային Ֆրանսիայի.
20. Տ. Ծաֆե եպիսկոպոս Աճեմյան, վերատեսուչ Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանի և ընծայարանի.
21. Տ. Զավեն եպիսկոպոս Չինչիմյան, առաջնորդական փոխանորդ Ալեքսանդրիայի թեմի.
22. Տ. Գարեգին եպիսկոպոս Գազանճյան, առաջնորդ Ծայրագույն Արևելքի և Նոր Զելանդիայի.
23. Տ. Վաչե եպիսկոպոս Հովսեփյան, առաջնորդական փոխանորդ Կանադայի թեմի.
24. Տ. Վազգեն եպիսկոպոս Օհանյան, առաջնորդական փոխանորդ Նյու-Յորքի.
25. Տ. Զգոն եպիսկոպոս Հակոբյան, հոգևոր հովիվ Միլանոյի:

Եպիսկոպոսական ժողովը բացվում է նախագահության նախագահ Վեհափառ Հայրապետի աղոթքով:

Այնուհետև կատարվում է եպիսկոպոսական ժողովի դիվանի ընտրությունը:

Ժողովի նախագահության անդամներ են ընտրվում՝ տ. Եղիշե պատրիարք, տ. Ծնորհք պատրիարք, ժողովի ատենապետներ՝ տ. Սերովքե արքեպ. Մանուկյան և տ. Բաբգեն արքեպ. Ապատյան, ատենադպիրներ՝ տ. Ծաֆե եպս. Աճեմյան և տ. Զավեն եպս. Չինչիմյան:

Վեհափառ Հայրապետը «Հոգւոց» է արտասանում ի հարգանս վերջին տարիների ընթացքում վախճանված բարձրաստիճան հոգևորականների հիշատակին:

Ատենապետ տ. Սերովքե արքեպ. Մանուկյանը հրավիրում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, եպիսկոպոսական ժողովի բացման առիթով, Իր օրհնության ու ողջույնի խոսքն ասելու: Վեհափառ Հայրապետը հանդես է գալիս ողջույնի ընդարձակ խոսքով, որը տպագրվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում (տես էջ 3):

Ատենապետ սրբազանը հանում եպիսկոպոսական ժողովի շնորհակալություն և երախտագիտություն է հայտնում Հայոց Հայրապետին՝ Նրա բովանդակալից ու ջերմ խոսքի համար:

Այնուհետև եպիսկոպոսական ժողովը հաստատում է հետևյալ օրակարգը.

1. Հայաստանյայց եկեղեցու բարեկարգության հարց. գեկուցող՝ տ. Ծնորհք պատրիարք.

2. Կուսակրոնության հարց. գեկուցող՝ տ. Զավեն եպս. Չինչիմյան.

3. Ս. Զատիկը անշարժ և հաստատուն մի օր տոնելու հարց. գեկուցող՝ տ. Զգոն եպս. Տեր-Հակոբյան.

4. Աստվածաշնչի աշխարհաբար թարգմանության հարց. գեկուցող՝ տ. Ծաֆե եպս. Աճեմյան.

5. Հայաստանյայց եկեղեցին և Էկումենիզմ. զեկուցող՝ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյան.

6. Հայաստանյայց եկեղեցին և խաղաղության ամրապնդում. զեկուցող՝ տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյան.

7. Ապրիլյան եղեռնի մահատակաց սրբացման հարց. զեկուցող՝ տ. Բաբգեն արքեպ. Ապատյան.

8. 1846 թվականի Կ. Պոլսի տ. Մատթեոս պատրիարքի բանադրանքի և ձեռնադրության Մաշտոցում ճգովքների վերացման հարց. զեկուցող՝ տ. Պսակ արքեպ. Թումայան.

9. Հայաստանյայց եկեղեցու ներքին միության ամրապնդման հարց. զեկուցող՝ տ. Սերովքե արքեպ. Մանուկյան:

Զսան րուպե ընդմիջումից հետո, եպիսկոպոսական ժողովը անցնում է օրակարգի հարցերի քննարկմանը: Ժողովի բացումից հետո, Վեհափառ Հայրապետը մեկնում է: Նախագահում է տ. Եղիշե պատրիարքը:

Ատենապետ սրբազանը հրավիրում է տ. Ծնորհք պատրիարքին՝ կարդալու իր գրավոր զեկուցագիրը օրակարգի առաջին հարցի մասին:

Ապա եպիսկոպոսական ժողովը լսում է նաև տ. Զավեն եպս. Չինչինյանի զեկուցագիրը՝ «Կուսակրոնության հարց»-ի շուրջ:

Եպիսկոպոսական ժողովի Ա նիստը ավարտվում է ժամը 14-ին:

Բ նիստ

Կիրակի, սեպտեմբերի 28-ին, երեկոյան ժամը 18-ին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նախագահության ներքո, գումարվում է եպիսկոպոսական ժողովի Բ նիստը՝ ատենապետությամբ տ. Բաբգեն արքեպիսկոպոսի, ի ներկայության 25 ժողովական սրբազան հայրերի:

Ժողովը աղոթքով բացելուց հետո, Վեհափառ Հայրապետը մեկնում է: Նախագահում են տ. Եղիշե և տ. Ծնորհք պատրիարքները:

Սույն նիստում հանգամանորեն քննության է առնվում հայ եկեղեցու բարեկարգության հարցը՝ տ. Ծնորհք պատրիարքի զեկուցման հիման վրա:

Ժողովը հաշվի առնելով, որ չէր կարող սպառել օրակարգի բոլոր հարցերի մանրամասն քննությունը վեց օրերի ընթացքում, գաղտնի քվեարկությամբ ընտրում է ութ հոգուց բաղկացած մի հանձնաժողով, որպեսզի նա հանգամանորեն ուսումնասիրի, մի տարվա ընթացքում, օրակարգի հարցերը և իր եզրակացությունները ներկայացնի Մայր Աթոռ՝ Վեհափառ Հայրապետին:

Եպիսկոպոսական ժողովը իր Բ նիստում քննության է առնում.

ա) Պսակի համար արգիլյալ օրերի կրճատման հարցը.

բ) Պահոց օրերի կրճատման հարցը.

գ) Մկրտության կանոնի կրճատման հարցը:

Բ նիստը ավարտվում է գիշերվա ժամը 22-ին:

Գ նիստ

Երկուշաբթի, սեպտեմբերի 29-ին, առավոտյան ժամը 10-ին, գումարվում է եպիսկոպոսական ժողովի Գ նիստը՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի, ատենապետությամբ տ. Սերովքե արքեպիսկոպոսի և ի ներկայության 25 անդամների:

Ժողովը աղոթքով բացելուց հետո, մեկնում է Վեհափառ Հայրապետը: Նախագահում են տ. Եղիշե և տ. Ծնորհք պատրիարքները:

Եպիսկոպոսական ժողովը իր Գ նիստում քննության է առնում Մաշտոցում մկրտության, պսակի և ձեռնադրության կանոնները և երկար խորհրդակցությունից հետո որոշում է ընդունում կենտրոնական հանձնաժողովին հանձնել վերոհիշյալ երեք կանոնների պարզեցված ձևերը վերջնական քննության համար:

Եպիս. ժողովի Գ նիստը ավարտվում է ժամը 14.30-ին:

Դ նիստ

Երկուշաբթի, սեպտեմբերի 29-ին, երեկոյան ժամը 17-ին, գումարվում է եպիսկոպոսական ժողովի Դ նիստը, նախագահությամբ տ. Եղիշե և տ. Ծնորհք պատրիարքների, ատենապետությամբ տ. Սերովբե արքեպիսկոպոսի և ի ներկայության 23 ժողովական հայրերի:

Եպիսկոպոսական ժողովի սույն նիստում տ. **Զգոն եպս. Տեր-Հակոբյանը** ընթերցում է «Ս. Զատիկը անշարժ և հաստատուն մի օր տոնելու հարց»-ի մասին իր գրավոր զեկուցագիրը:

Եպիսկոպոսական ժողովը նկատի ունենալով, որ այս հարցի լուծումը կապված է մյուս եկեղեցիների դիրքի և որոշման հետ, միաձայնությամբ ընդունում է հետևյալ բանաձևը.

«Երբ քրիստոնյա եկեղեցիները համաձայնին ս. Հարության տոնը կատարելու անշարժ և հաստատուն օր մը, Հայց. եկեղեցին ևս միանա որոշումին և ս. Զատիկը տոնե տարվան անշարժ օր մը, ապրիլի Բ կամ Գ կիրակին»:

Փոքր դադարից հետո, եպիսկոպոսական ժողովը իր Դ նիստում անցնում է «Կուսակրոնության հարց»-ի քննարկմանը:

Նախագահում է Վեհափառ Հայրապետը և առաջինը խոսք առնելով շեշտում եպիսկոպոսական ժողովի օրակարգում դրված սույն հարցի կարեւորությունը: Ն. Ս. Օծությունը անդրադառնում է նաև վերջերս ԱՄՆ-ում, հայոց թեմի Նյու-Ճրքիի եկեղեցում, նախկին կուսակրոն վարդապետի ամուսնացյալ վիճակում քահանայագործության հարցին, բացատրում Գերագույն հոգևոր խորհրդի դիրքը այս խնդրում և հարցը փակելու համար հայրապետական Իր կարգադրությունը, ոչ թե կատարված հակաօրինականությունը ընդունելու, այլ ներելու «ոչ յօրինակ այլոց» սկզբունքով:

«Կուսակրոնության հարց»-ի շուրջ մտքերի փոխանակությունը շարունակվեց մինչև նիստի ավարտը, երեկոյան ժամը 22-ը:

Ե նիստ

Երեքշաբթի, սեպտեմբերի 30-ին, առավոտյան ժամը 10-ին, գումարվում է եպիսկոպոսական ժողովի Ե նիստը՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի, ատենապետությամբ տ. Բաբգեն արքեպիսկոպոսի, ի ներկայության բոլոր ժողովական հայրերի:

Կարդացվում և վավերացվում են Ա և Բ նիստերի ատենագրությունները:

Այնուհետև ժողովը զբաղվում է դարձյալ «Կուսակրոնության հարց»-ի քննությամբ: Մտքերի և տեսակետների երկար փոխանակություններից հետո, եպիսկոպոսական ժողովը մեծամասնությամբ որոշում է պահել ավանդական դրությունը:



ՍՐԲԱՆՈՒՅՍ ՄԵՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ

Այս եպիսկոպոսական ժողովը իր Ե նիստում լսում է **տ. Ծաֆե եպիսկոպոս Աճեմյանի** գրավոր զեկուցագիրը Աստվածաշնչի աշխարհաբար թարգմանության մասին:

Ժողովի Ե նիստը փակվեց ժամը 14.30-ին:

Զ նիստ

Երեքշաբթի, սեպտեմբերի 30-ին, երեկոյան ժամը 17-ին, գումարվում է եպիսկոպոսական ժողովի Զ նիստը՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի, ատենապետությամբ տ. Բաբգեն արքեպիսկոպոսի, ի ներկայության 25 ժողովական հայրերի:

Եպիսկոպոսական ժողովի Զ նիստում ընթերցվեցին երկու զեկուցագրեր: **Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը** կարդաց «Հայաստանյայց եկեղեցին և Էկումենիզմը» հարցի շուրջ իր գրավոր զեկուցագիրը, իսկ **տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը՝** «Հայաստանյայց եկեղեցին և աշխարհի խաղաղության ամրապնդումը» հարցի շուրջ իր զեկուցագիրը:

Տ. Թորգոմ արքեպիսկոպոսի զեկուցագրի առթիվ եպիսկոպոսական ժողովը միաձայնությամբ արձանագրեց իր համակրանքը Եկեղեցիների համաշխարհային խորհրդի այն ճիզերի մասին, որոնք ուղղված են քույր եկեղեցիների մեջ է՛լ ավելի ամրապնդելու եղբայրության ոգին և դրական համագործակցությունը:

Եպիսկոպոսական ժողովը քննության առավ նաև տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանի զեկուցագիրը և միաձայնությամբ յուրացնելով զեկուցագրի ոգին, իր որդիական երախտագիտությունն ու շնորհակալությունը արձանագրեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի խաղաղասիրական և հայրենասիրական գործունեության համար՝ ի խնդիր աշխարհի խաղաղության ամրապնդման կատարած աշխատանքների, և միաձայնությամբ ընդունեց հետևյալ բանաձև-կոչը.

«Մենք պատվեր կուտանք մեր եկեղեցւոյ սպասավորներուն և հավատացյալներուն արթուն և սրտեռանդն կերպով պաշտպան կանգնիլ աշխարհի խաղաղության, ժողովուրդներու բարեկամության և պետություններու համերաշխ գործակցության դատին, իրավունքի, արդարության և ազատության նվիրական սկզբունքներու լույսին ներքո»:

Փոքր դադարից հետո եպիսկոպոսական ժողովը քննության առավ Աստվածաշնչի աշխարհաբար թարգմանության հարցը:

Խորհրդակցությունից հետո եպիսկոպոսական ժողովը միաձայնությամբ որդեգրեց հետևյալ բանաձևը.

«Հանձնարարել հայերեն գրաբար Աստվածաշունչի բնագրի գիտական հրատարակությունը և տպագրությունը Մայր Աթոռ ս. Էջմիածնին կամ Մայր Աթոռի միջոցով՝ Հայաստանի գիտական հաստատության մը:

Հանձնարարել Աստվածաշունչի արևմտահայերեն թարգմանությունն ու տպագրությունը Երուսաղեմի հայոց պատրիարքության:

Խնդրել Վեհափառ Հայրապետին և Երուսաղեմի պատրիարքին, որ կազմեն թարգմանության հանձնախումբ:

Երկու վերոհիշյալ աշխատանքները տանիլ զուգընթացաբար»:

Եպիսկոպոսական ժողովը գոհունակությամբ տեղեկացավ Վեհափառ Հայրապետից, թե Նոր Կտակարանի չորս Ավետարանները և Գործք Առաքելոցի արևելահայերեն հոր թարգմանությունը շուտով լույս կտեսնի Մայր Աթոռի տպարանից 10.000 տպաքանակով:

Եպիսկոպոսական ժողովի Զ նիստը ավարտվում է երեկոյան ժամը 22-ին:

Է ն ի ս տ

2որեքշաբթի, հոկտեմբերի 1-ին, առավոտյան ժամը 10-ին, գումարվում է եպիսկոպոսական ժողովի Է նիստը՝ նախագահությամբ տ. Եղիշե և տ. Ծնորիք պատրիարքների, ատենապետությամբ տ. Սերովբե արքեպ. Մանուկյանի, ի ներկայության 23 ժողովականների:

Ժողովում ընթերցվում և վավերացվում են Գ և Դ նիստերի ատենագրությունները:

Այնուհետև տ. **Բաբգեն արքեպ. Ապատյանը** ընթերցում է իր գրավոր զեկուցագիրը՝ 1915 թվականի Ապրիլյան եղեռնի նահատակների սրբացման հարցի շուրջ:

Եպիսկոպոսական ժողովը, մտքերի փոխանակությունից հետո, միաձայնությամբ ընդունում է հետևյալ որոշումը.

ա) Փոխարինել Գևորգ Ե-ի օրով սահմանված Նոր կիրակին որպես «Բյուրավոր նահատակաց օր»-ը ապրիլի 24-ով, հայրապետական կոնդակով.

բ) Պատարագի ընթացքին, քահանայի ծածուկ աղոթքի ժամանակ երբ կհիշատակվին մեջեջյալները, հիշատակել Ապրիլյան եղեռնի նահատակները.

գ) Պատրաստել «Վարք սրբոց» մը Ապրիլյան եղեռնի զոհերու մասին, որպես նախապատրաստություն սրբացման:

Այս աշխատանքը հանձնարարվեց կենտրոնական հանձնաժողովին, տ. Բաբգեն արքեպ. Ապատյանին և տ. Գնել եպիսկոպոսին:

Այնուհետև Է նիստում իր գրավոր զեկուցագիրն է կարդում տ. **Պսակ արքեպ. Թումայանը**, «1846 թվականի տ. Մատթեոս պատրիարքի բանալիքանքը (բողոքականների դեմ) և ձեռնադրության Մաշտոցի մեջ նգովքներու վերացման հարց»-ի շուրջ:

Ժողովը վիճաբանություններից հետո միաձայնությամբ ընդունեց հետևյալ բանաձևը.

«Տ. Մատթեոս պատրիարքի 1846 թվականի բանադրանքը նկատել ժամանակի և տեղվույն հետ կապված հարց և քաջալերել դեպի սեր և միություն ամեն ձեռնարկ Հայց. եկեղեցվո և հայ ավետարանական համայնքներու միջև»:

Սույն հարցի վերջնական ուսումնասիրությունը հանձնարարվեց հանձնաժողովին:

Եպիսկոպոսական ժողովը ձեռնադրության Մաշտոցի նգովքների վերացման մասին մեծամասնությամբ ընդունեց հետևյալ բանաձևը.

«Ձեռնադրության Մաշտոցին մեջ պահել նգովքները իբրև հայ եկեղեցվո վարդապետության հիմնական մաս»:

Եպիսկոպոսական ժողովի Է նիստը ավարտվեց ժամը 14.30-ին:

Ը ն ի ս տ

Հոկտեմբերի 1-ին, չորեքշաբթի օրը, երեկոյան ժամը 17-ին, գումարվեց եպիսկոպոսական ժողովի Ը նիստը՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի, ատենապետությամբ տ. Բաբգեն արքեպ. Ապատյանի և ի ներկայության 25 ժողովական հայրերի:

Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը սույն նիստում ընթերցում է իր գրավոր զեկուցագիրը «Հայ եկեղեցվո ներքին միության ամրապնդման հարց»-ի շուրջ:

Ժողովում առաջինը խոսք է առնում նախագահ Վեհափառ Հայրապետը և անդրադառնում մի կողմից Մայր Աթոռի և մյուս կողմից նվիրապետական Աթոռների և թեմերի հարաբերությանը, մեր եկեղեցու ներքին կարգապահությանը, միության և սիրո զգացումների ամրապնդմանը և շեշտում՝ կարեվորությունն ու անհրաժեշտությունը «մեկ մարմին ըլլալու զգացումին և գիտակցության՝ Մայր Աթոռի շուրջ»:

Ն. Ս. Օծությունը ապա ընդգծում է Մայր Աթոռի և Տանն Կիլիկիո կաթողիկոսության միջև շարունակվող տագնապալի կացության վերացման անհրաժեշտությունը՝ հանձնելով այն ժողովական սրբազան հայրերի լուրջ նկատառման, և ցավ հայտնում՝ կիլիկյան Աթոռի գահակալի և Աթոռի եպիսկոպոսների բացակայության առթիվ՝ սրբազումար այս ժողովից:

Եպիսկոպոսական ժողովը մտքերի փոխանակություններից հետո միաձայն ընդունում է հետևյալ բանաձևը.

«Ժողովս ցավով կարձանագրե Տանն Կիլիկիո կաթողիկոսի և իր եպիսկոպոսներուն բացակայությունը եպիսկոպոսական ժողովեն, ուր եղբայրական սիրո ոգիով կրնային քննարկվիլ և լուծվիլ գրավված թեմերու հարցը և այն բոլոր հարցերը, որոնք արգելք կհանդիսանան Ամենայն Հայոց Հայրապետության և Կիլիկիո Աթոռին համերաշխ և անկեղծ գործակցության, ի պայծառություն Հայց. եկեղեցվո և համրապնդումն անոր ներքին միության»:

Եպիսկոպոսական ժողովի Ը նիստը փակվեց երեկոյան ժամը 20.30-ին:

Թ Ն Ի Ս Ս

Հոկտեմբերի 2-ին, հինգշաբթի, երեկոյան ժամը 19-ին, գումարվում է եպիսկոպոսական ժողովի Թ նիստը՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի, ատենապետությամբ տ. Բաբգեն արքեպ. Ապատյանի և ի ներկայության 25 ժողովական հայրերի:

Կարդացվում է և վավերացվում եպիսկոպոսական ժողովի ինն նիստերի ատենագրությունները:

Ապա խոսք է առնում ատենապետ սրբազանը և, հանուն ժողովի, խորին շնորհակալություն և երախտագիտություն հայտնում Վեհափառ Հայրապետին՝ եպիսկոպոսական ժողովի գումարման առթիվ Ն. Ս. Օծության կատարած սրտագին աշխատանքների, հովանավորության, խորհուրդների և թելադրությունների ու հայրական հոգածության համար:

Ատենապետ սրբազանը, հանուն ժողովի, նույնպես շնորհակալություն է հայտնում դիվանի ատենադպիրներին՝ նրանց կատարած բարեխիղճ աշխատանքների համար:

Այնուհետև ատենապետ սրբազանը հրավիրում է Վեհափառ Հայրապետին Իր օրհնության խոսքն ասելու և հայրապետական Իր պատգամը տալու եպիսկոպոսական ժողովի փակման առիթով:

Ն. Սրբությունը Իր օրհնության և փակման խոսքի մեջ նշում է, որ եպիսկոպոսական ժողովի գումարումը Հայց. եկեղեցին պատմական կոչվելու մի ժամանակաշրջանի սկզբնավորության առաջ է դնում իր ներկայացուցչական բնույթով և օրակարգի վրա դրված կարևոր հարցերով:

Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ ողջունում է ժողովի կատա-

բաժնի աշխատանքները սիրո և համերաշխության մթնոլորտում, շինարար ոգով և առողջ մոտեցումներով:

Վեհափառ Հայրապետը Իր բարեհաճ գոհունակությանն է արժանացնում ժողովում կարդացված գրավոր զեկուցագրերի գաղափարական բարձր բովանդակությունն ու պատրաստվածությունը, որոնք հիմք հանդիսացան մասնաճյուղերի և վիճաբանությունների:

Նորին Սրբությունը մասնավոր կարևորությամբ նշում է Իր կողքին Երուսաղեմի հայոց տ. Եղիշե և Թուրքիայի հայոց տ. Ծնորհք պատրիարքների մասնակցությունը եպիսկոպոսական ժողովին, որոնք իրենց ներկայությամբ բարձրացրին ժողովի հեղինակությունը:

Վեհափառ Հայրապետը շնորհակալություն է հայտնում մասնաճյուղի կատարած աշխատանքների համար և ապա խոսում ընդհանրապես հայ եկեղեցու բարեկարգության անհրաժեշտության մասին՝ շեշտելով, որ հայ եկեղեցու բարեկարգության հարցին պետք է մոտենալ չափազանց զգուշությամբ, իմաստության և խոհական պայմաններում պահելով անցյալի մեր ավանդություններն ու ոգին, միաժամանակ քայլ պահել ժամանակի և կյանքի արդի պահանջների հետ: Ամեն նորություն հառաջադիմություն չէ, նշում է Հայոց Հայրապետը: Կան նորություններ, ասում է Նա, որոնք հետադիմություններ են և մույնիսկ՝ անկումային երևույթներ:

Այնուհետև Ն. Սրբությունը թելադրում է ժողովին, հայ եկեղեցու, հայ ժողովրդի և հայոց վերածնված աշխարհի վերազարթոնքի զգացմունքով և գիտակցությամբ շարունակել հոգևոր, եկեղեցական, մշակութային և հայրենասիրական առաքելությունը, Աստծու փառքին, եկեղեցու պայծառության և հայ ժողովրդի բարօրության համար և ի հայրենիս և ի սիրտուս աշխարհի:

Վեհափառ Հայրապետի փակման խոսքը տպված է ամսագրի սույն համարում (էջ 29):

Եպիսկոպոսական ժողովը փակվում է երեկոյան ժամը 22-ին՝ խմբովին երգված Տերունական աղոթքով և հայրապետական «Պահպանիչ»-ով:

